№ 4 (84) VIII ՏԱՐԻ 30 ԱՊՐԻԼ 1898

"Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

# ԴՐՕՇԱԿ

Adresse :
Rédaction du "Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

## ՄԵՐ ՎԵՐՔԻՆ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ

—o—

Դարաւոր ստրկութիւնից հայը ժառանգել է և նը-պաստաւոր և աննպաստ յատկութիւններ։ Հայութեան մի մասը հանդէս է գալիս այսօր իր յառաջխաղաց ոգով և ձգտում է կերպարանափոխել այն ստրկական միջավայրը, որի մէջ կաշկանդած մնացել է դարերով. նրա սրտի խորքերում մի թուլաւոր ատելութիւն է բուն դրել դէպի իրեն տիրապետողներն ու հարստահարողները, և մի փրկարար ձգտում դէպի աւելի բարձր կերպեր մարդկային հասարակական կացութեան։ Հայութեան միւս մասը դեռ պահպանողական է իր ամբողջ էութեամբ։ Գաղափարական հակումներից զուրկ՝ նա ամէն կերպ աշխատում է „յարմարուել" իր գոյութեան պայմաններին, կորցնելով ամէն բան, ինչ որ մարդկութեան առաքինութիւնն է կազմում, վաստակելով այն ամէնը, ինչ որ յատուկ է միայն իր անկեալ ապականած միջավայրին... Այդ „յարմարուող" տարրերը միմիայն մեր ազգի բնորոշ գիծը չեն, այլ բոլոր ազգութիւնների, որոնք իրենց ուսերի վրայ կրել են երկարատև բռնութեան լուծը։

Նման անասնական աշխարհի պարագիտներին (մակաբոյծ), որոնք շրջապատող պայմաններին յարմարուելու և իրենց գոյութիւնը յարատևելու համար, փոխանակ զարգանալու դէպի բարձրագոյն կերպեր՝ նորանոր օրգաններ ձեռք բերելով, ոչնչացնում են սեփական օրգանները, շարժուելու ընդունակութիւնը, զգայարանքները՝ — հայութեան այդ տարրերը ևս, առաջադիմութեան և մարդկային բարձր պահանջներ չունենալով՝ խեղդում են իրենց մէջ գաղափարական կեանքի եղած սաղմերն էլ և իրենց վայելքն են գտնում զօրաւորների առաջ սողալու արհեստի և անասնական, հլու հնազանդութեան մէջ։

Եւ տասնեակ տարիներից ի վեր նրանք քարոզում են մեզ. „հնազանդեցէք իշխանաւորներին"... Ովքե՞ր են դրանք։ Հայ յեղափոխականը լաւ է ճանաչում իր այդ մահացու թշնամիներին. մեր կղերը, մեր աղաներն ու գրոշապաշտ վաճառականները, մեր ամբոխի ու ինտելիգենցիայի փչացած ու որոճող մասը... Որքա՞ն ապականութիւն ու գարշանք է կուտակուած դրանց ստրկական մթնոլորտում. շողոքորթել ու քծնել, ամէն մի ցած պաշտօնեայի ոտքերը լիզել, հնազանդօրէն կրել ամենածանր անպատուութիւններ, թուք ու նախատինք, առանց կարմրելու — դա նրանց արհեստն է, և դա նրանց վայելքն է։ Նրանց հոգին ողորկուել, հարթուել է այդ ուղղութեամբ, ինչպէս որ նրանց կաշին ընտելացել է մտրակի հարուածներին։ Այդ տարրերից են ծնունդ առնում մեր ամենավտանգաւոր ներքին թշնամիները՝ լրտեսներն ու դաւաճանները։ Դրանք հայութեան մրուրն են կազմում, հասարակութեան նողկելի թափթփուկը և իբրև այդպիսիք՝ նրանք ներկայանում են մեզ, որպէս անխուսափելի ծնունդ պատմական երկարատև շրջանի, որի ընթացքում հայութիւնը մասամբ աղճատուել է բարոյապէս, մղելով գոյութեան անդադրում և արհաւրալից կռիւներ ընդդէմ նորանոր աշխարհակալողների անհանդուրժելի բարբարոսութիւնների։

Պատմական ծնունդ, միջավայրի ծնունդ ասելով, բնաւ չենք մտածում որոշ կարգի ոճրագէտների նման արդարացնել այդ տարրերը հանդերձ իրենց սխրագործութիւններով։ Երևոյթը լուսաբանում ենք միայն. եթէ արդարացնել ուզէինք, յեղափոխական սուրը չէինք մխիլ դաւաճանների ու ազգային ամէն ցեցերի յանցաւոր կուրծքը։ Ո՛չ. հայկական շարժումների սկզբնաւորութեան օրից մենք մահ ենք հրատարակել այդ բոլոր ցեցերին և շարունակ ահաբեկել ու դաշունահարել ենք նրանց, իբրև սուլթանական բռնակալութեան փաստաբանների։ Այսուհետև մեր խնդիրը այդ հողի վրայ աւելի ևս բարդանում է, քանի որ մեր ներքին թշնամիների բանակը ստւարանում է նորանոր տարրերով։

Հայկական վերջին տարիների աղէտները և մի կարգ յեղափոխական խմբերի շահատակութիւնները առաջ բերեցին մեր ժողովրդի նոյնիսկ համակրելի խաւերի մէջ մի հոսանք, որ բացայայտ կերպով հակայեղափոխական է։ Այդ տարրերը մեր ուրիշ ներքին թշնամիների պէս չեն քարոզում „հնազանդութիւն բռնակալին". սակայն նրանց ընթացքն էլ էապէս շատ չի տարբերուում առաջիններից։

Հայ ժողովրդի մէջ — և այն գլխաւորապէս ապահով վայրերում, ուր խօսքի ազատութիւնը իրօք ի չարն է գործ տրւում — շրջում են ուղեղով ու զգացմուն-

քով պառամեալ Ֆրազեօրները և հակայեղափոխական պրոպագանդ են մղում։ Նրանք անիծում ու անեանարկում են մեր ամենաանձնուէր հերոսներին, որոնք համարձակ սլանում են դէպի արիւնի դաշտը և իրենց մատաղ գլուխներն են զոհ բերում հայրենիքի սեղանի առաջ. այո՛, այդ անձնուէր զինուորները միայն նզովք ու անէծք են յարուցանում հակայեղափոխականների և „էէզոքականների“ բանակում... Ֆրազայի հերոսները ռմբակոծում են գործի հերոսներին. որպէ՞սի այլանդակութիւն... Ցաւ է յիշել, որ միամիտ ամբոխից շատերը երամականութեան բնազդին հետևելով՝ մղում են այդ ազդակոծան հոսանքի ետևից։

Եւ այդ մարդիկը, որոնք տրամաբանող էակներ չեն, այլ որոճողներ, իրենց բթամտութեամբ անկարող են լինում հասկանալ, թէ որպիսի անհուն ծառայութիւն են մատուցանում՝ սուլթանական կառավարութեան։ Ֆրազամոլութեան և քննադատամոլութեան ախտով վարակուած՝ նրանք չեն ըմբռնում, որ ներկայ տխուր վայրկեանին իրենց անվերջ կռկռոցներով ու երեմիականներով աւելի ուժեղ հարուած կարող են հասցնել հայ յեղափոխական գործին, քան սուլթանի բոլոր հաւատարիմ ծառաները՝ ոստիկանները, լրտեսներն ու դաւաճանները։

---

## ՆԱՄԱԿ ԲԱԹՈՒՄԷՆ

(ՎԱՉԻԷՆԻ ՄԱՀԻԱՆ ՍՈՒԹՈՎ)

—

19/31 մարտ 98

Ճշմարտութիւններ կան, որ թէև շատ յստակ ու ակներև, բայց մարդ կըստիպւի նոր ձևեր, նոր միջոցներ փնտռել, ըմբռնել տալու ժողովրդի մը, որ տակաւին չէ հասած կատարեալ գիտակցութեան։

Հայկական շարժման սկզբին՝ բայց մանաւանդ վերջերս — բացի բազմերանգ տիրացուներէն — մեր մէջ կայ և մի մեծ մաս, որ յեղափոխութիւնը՝ չարիքի և յեղափոխականներն՝ անմիտ խռովարարներու տեղ դրած է։ Կարճատեսութեամբ զինուած այդ „խաղաղասէրները“ ամէն խժդժութեան բուն պատճառ՝ յեղափոխակաները կը բռնեն։

—Եթէ ցոյց չընէին, կոտորած չէր ըլլար, եթէ փաշաներուն տէրրօրի չենթարկէին, գաւառներու մէջ սարսափներ տեղի չէին ունենար, եթէ յեղափոխականներ չերևային այսինչ տեղ՝ ժողովուրդը հանգիստ շունչ կառնէր, եթէ յեղափոխականները գոյութիւն չունենային՝ այն ինչ քաղքին մէջ ոչ բանտարկութիւն, և ոչ ալ կեղեքումներ կը վերսկսէին. և այսպիսի բազմաթիւ „եթէ“-ներ ու „չէր ըլլար“-ներ շարելով, իսրտէ կ՝անիծեն կը հայհոյեն, և նոյն իսկ կը հալածեն այդ „անզգամ“ յեղափոխակաները, որոնք կրակին հետ խաղալով, բացի իրենց վնասելէն՝ բազմաթիւ անմեղներու ալ տուժել կուտան։

Խորամանկ կառավարութիւնն ալ ժողովրդի տրամադրութիւնը լաւ հասկնալով, մերթ հալածանքով և մերթ փաղաքշանքով, առանձին ճիգ կը թափէ որչափ կարելի է, արմատացնել անոր մէջ այդ թիւր-հասկացողութիւնը, մտ ապագային յաջող կերպով օգտուելու համար. նա ամէն մի յարմար բոպէին կաշխատի տարածել և հասկցնել, որ եթէ յեղափոխակաները դադրին գործելէ, միշտ անպակաս պիտի ընէ իր հայրական շնորհները հայ ազգի գլխին. և իրրև փաստ — ուրտեղ որ նշմարած է յեղափոխականի գոյութիւնը, սկսած է նեղել, տանջել, բանտարկել ժողովուրդը, յայտարարելով որ „տուէք յեղափոխականին և այս [illegible]ղութիւնները կը դադրին“. և իսկապէս, ե[illegible]ածը ձեռք կանցնէ, բանտարկեալներն ալ կը ձգէ, սղութիւններն ալ կը դադրեցնէ... առժամեայ կերպով։

Ժողովուրդի այդ մասը որ խոր քունէն արթննալուն շշմած է, որ իր ստրկային հանգիստը խանգարելուն համար դառնացած է և յուսահատութեամբ լեցուած՝ ապրիլ, մի կերպ կեանքը քաշ տալ կը բաղձայ, ժողովուրդը, որ կաշիի վախէն երբեմն այն աստիճան կը խոնարհի, որ մարդ կը փորձւի վախնալ թէ պիտի մոռնայ ամէն հայրենի սրբութիւն, պիտի ուրանայ իր սիրասուններու թափած արիւնը. այդ ժողովուրդը անդադար կը խաբւի կատարուած դրամայէն... մի քանի ամսով միայն մի քիչ հանգիստ ապրիլը — իրր հաստատ փաստ — իրեն այնպէս կը թւի թէ շատ իրաւացի է կառավարութեան յայտարարութիւնը. եթէ յեղափոխակաները չըլլային, խստութիւնները չպիտի կատարուէին՝ քանի որ անմիջապէս դադրեցան, անոնց աներեւոյթանալովը։

Սակայն ո՛վ գժբախտ ժողովուրդ, չե՞ս տեսներ որ ո՛չ թուրք կառավարութեան հալածանքը կը դադրի և ո՛չ ալ „անձնուէր“-ներու շարքը կը հատնի։

Դո՛ւք, հայ մարդիկ, անթիւ դառն փորձերէն վերջը պէտք է 1 անգամ 1-ի պէս հասկնայիք, թէ ի՞նչ է կառավարութիւնը, և ի՞նչ է յեղափոխութիւնն ու յեղափոխակաները. դուք յանցաւոր կարճմտութեամբ դեռ ևս չէք ըմբռնած թէ ինչո՞ւ կառավարութիւնը կը հալածէ յեղափոխականին։

Դուք չէ՞ք գիտեր, թշնամին շատ լաւ գիտէ, որ իր դժոխային ծրագիրները մերկացնող, իր չար ձեռնարկներուն դիմագրաւող, իր մահաբեր հարուածներուն պատասխանող և վերջապէս իրեն դէմ կուռող ու ընդդիմացող ուժը միայն յեղափոխական (ըլլայ պաշտօնական կամ անպաշտօն) տարրի մէջ է. այո՛, նա քաջ գտած է, որ եթէ այդ տարրը չլինի, երբ ուզէ կարող է անարգել գործադրել իր դիւային ծրագիրները ինքնապաշտպանութենէ զուրկ ժողովրդի գլխին։ Կառավարութիւնը որչափ ալ անագորոյն՝ երբեմն ստիպած է իր բնաջնջման գործադրութիւնն ընդհատել և բարեյաջող հանգամանքներուն թողուլ շարունակութիւնը. սակայն յեղափոխական տարրը չի շլանար տրուած առժամեայ հանգստէն, որ մի տեսակ զինադադար է կառավարութեան օգտին. նա, հեռո՛ւն սպառնացող վտանգը պարզ տեսած՝ իր կենդանի բաղդներով, ռմբերով, չի թոյլ տար թշնամին, որ հանգիստ սրտով փէշերը ժողվէ, և յարմար վայրկենին վերսկսի աւելի սաստկութեամբ այն, ինչ որ ամբողջ աշխարհին սարսուռ ազդեց։

Ա՜հ, ատոր համար է, որ խելացնոր կը հալածէ յեղա-

փոխականին. ահա այդ պատճառաւ առժամեայ հանգիստ կուտայ, կը շոյէ, կը խոստանայ, կըսպառնայ, կը ցաւի. . .

Վերջապէս միանգամ՝ ընդմիշտ ըմբռնեցէք այս դառըն ճշմարտութիւնը, ու եթէ գործիք ալ պիտի ըլլաք, գիտակցաբար դարձէք. . . չի զղջաք. . .

* * *

Իմացաք Տէրոյեան Տիգրանի մահը, բայց չէք իմացած այդ մահուան պատճառները, որ լուսաբանուած են հիմա: Սկիզբները, երբ մենք բոլորովին միամիտ եղածին վրայ, կը զար[illegible]յինք, թէ ինչպէս տաճիկ կառավարութիւնը սիր[illegible]ւաւ յանկարծ և համարձակօրէն կուի մտնել ջ ա ն ֆ է տ ա յ ի ն ե ր ի հետ և այն ալ քանի մը հարիւր զինուորներով առանց թնդանօթի և պատերազմական երկար-բարակ պատրաստութիւններու. կը զարմանայինք՝ որովհետև ալ պատմական ճշմարտութիւն մը եղած էր, որ թիւրք հեղգ ու պորտաբոյծ զինուորականներ, վայրենաբարոյ զինուորներն ու քիւրդերը անզէն ու անպաշտպան ժողովրդին վրայ միայն իրենց բազուկներուն ուժը փորձել գիտէին. ջարդել թոյլ կիները ու անմեղունակ երախաները:

Իսկ երբ խնդիրը ուրիշ կերպարանք կառնէ, երբ փոխանակ լացող ու սարսափահար կիներուն ու մանուկներուն, ֆէտայիներու հետ պէտք է գործ ունենալ, օ՜, այն ատեն, ալլահն ազատէ: Պէտք է կանոնաւոր պատերազմի պատրաստութիւն տեսնել, յարձակումի և նահանջի ծրագիրներ կազմել և ապա հայ յեղափոխականին հետ փորձանքի բռնուիլ: Երբ գործը շատ երկարի, թիւրք զինուորը և անարի քիւրդը „ճանըմա միննէթ“ ըսելով ք ա ջ ա բ ա ր կծկիլ ալ գիտեն: Ուրիշ ճար չկայ:

Ֆէտայիին գնդակը ե ո ւ մ ո ւ ր ճ ա խ է թիւրք զինուորին համար. և երբ ան չկահէ, կատակ չգիտեր:

Տաճիկ կառավարութիւնը շատ լաւ հասկցած է ֆէտայիին բարոյական ուժը, ուստի սկսած է լրտեսութիւնը, որ իր գոյութեան աւագ և սրբազան սիւնեբէն մէկը եղած է, խրախուսել, ուռճացնել, և այդ միջոցով յեղափոխական մատանջող գաղտնիքները աշխարհագրական քարտէսի մը պէս բաց տեսնել: Եւ „յոյս մեծ“ ունի թէ դաւաճանային կազմակերպութիւնը օսմանեան „մէջը անցած“ կառավարութեան փրկաբար դիւանագիտութիւնն է:

Լրտեսները, մանաւանդ հայ լրտեսները, թիւրք կառավարութեան մասնաւոր պաշտպանութեան առարկայ եղած են. որովհետև Տէրոյեանի վրայ տարած յաղթանակը անոնց կը պարտի, մանաւանդ Աճէմեան Կարապետի (Բաշօ աւելորդ անունով) և Թոնիրչինողեան Հայրապետի, որոնք հանրածանօթ եղած են և իրենց հաւատարիմ ծ ա ռ ա յ ո ւ թ ե ա ն համար կառավարութենէն թօշակ ալ կստանան:

Սոյն արարածները, Տէրօյեանի քաղաք մտնելը լսածնուն, կառավարութեան ականջը կը հասցնեն, որուն հետևանքն եղաւ, կառավարութեան կողմէ սարսափելի նեղութիւններ, ու յաճախակի խուզարկութիւններ, որոնք դեռ կը շարունակուին, թէև Տէրօյեան և իր ընկերներ անհաւասար կուի մէջ հերոսաբար մեռած են: Թիւրք կառավարութիւնը անգամ՝ մ՚ալ հասկցաւ, թէ ֆէտային դարտակ անուն մը չէ:

Պարոն մատնիչները, կառավարական ա ն ա ռ ի կ հովանաւորութեան տակ, պարծենալով կը պարծենան իրենց սխրագործութիւններուն վրայ, և այնքան գինովցած են սուլթանի լիառատ շնորհներէն, որ խելքերնուն մտքերնուն չանցնիր թէ յեղափոխութիւնը վերջին դատաստանին չձգէր իրենց հաշուետուութիւնը. . .

Անոնցմէ առաջինը — Բաշօն իր գովելի վարքի համար, և ի վարձատրութիւն իր հ ա յ ր ե ն ա ս ի ր ա կ ա ն անհամար ծառայութիւններուն, յեղափոխութենէն սիրուն նշան մը ստացաւ. . . երեսին վրայ սև գընդակ մը:

Բայց մէկ երեսին այդ ապտակը հերիք չէ: Երանի անոնց, որոնք թէ սուլթանէն կը վարձատրուին և թէ. . . յեղափոխականներէն:

## ՆԱՄԱԿ ԱՐԱԲԿԻՐԷՆ

—

21/2 դեկտ. 97

Քարսիրտ բնութիւնը օսմանեան վանդալ կառավարութեան հետ ձեռք ձեռքի տուած, անհանդուրժելի բան մը ըրած են կեանքը հոս. այնպէս որ գերագոյն յուռետեսութիւնով մը պիտի բացականչէինք, լաւ էր ազգային անձնասպանութիւնով մը վերջ տալ մեր գոյութեան, քան ապրիլ ներկայ վատթար ու դժոխային պայմաններուն մէջ:

Ցուրտը սարսափելի է: Մէկ երկու օրուան մէջ 4-5 սառած դիակներ բերուեցան քաղքիս բոլորտիքներէն: Դեռ չփիտցուիր ուրիշ շատ մը սառնամածներու ճիշդ թիւը: Համատարած աղքատութիւնը իր ցնցոտիներու տակ կը պատսպարէ, անթիւ անօթի-մեռ ընտանիքներ, որոնց միսը ուտելէն չկշտանար սակայն մեր բ ա ր ե խ ն ա մ փ ա տ ի շ ա հ ը: Ցետնեալ տուրքերու գանձումը, սոսկալի անգթութիւնով կը կատարուի, և թիւրքերը, հաւատացէք, մասնագէտներ են, անողորմ միջոցներու ներշնչման մէջ: „Անգթութեան առաքեալները“. . . ի՜հարկէ չենք սպասեր գժնեկէն խաղող քաղել. . .

Զոր հոգի մը մնաց քովերնիս, կառավարութիւնը հիմա սկսած է տուրքերը գանձելու համար, ժողովրդի կալուածները աժան աժան, աղցնի գնով, վարձու տալ և ստակը պետական տուրքերու պառկեցնել:

Թօփհանէի ժողովը, 75 ոսկի ղրկած էր, մեր հազարաւոր ոսկիներու կորուստին փոխարէն:

Գլուխնին ուտէր ատ ալ:

## ԹԱԼԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ
## ԵՒ
## ՀԵՏԵՒԱՆՔԸ

—

Պետութիւններ կան, որ քաղաքակրթութեան միջոցով են ձգտում մարսել իրենց հպատակ ազգութիւններին. պետութիւններ էլ կան, որոնք նոյն նպատակի համար սուր ու բռնութիւն են գործ դնում: Առաջինների տիպական ներկայացուցիչն է Մեծ Բրիտանիան,

վերջինների կարգին է պատկանում Սպանիան։ Ընդհանրապէս դատելով՝ ամէն մի պետութիւն եսական է, ամէն մի կառավարութիւն վերջին անալիզում — թալանող ու յափշտակող։ Ուրիշ կերպ էլ չէր կարող լինել, քանի որ ամենաառաջադէմ և ամենազատամիտ պետութիւնն իսկ միմիայն որոշ դասակարգի շահերի մարմնացումն է և ձգտումների արտայայտիչը։ Այդ այդպէս ընդունելով հանդերձ՝ չենք կարող թագցնել մեր համակրանքը դէպի այն պետութիւնները, որոնք ժողովուրդների մէջ քաղաքակրթութեան լոյսն են տարածում, ինքնավարութեան և ազատութեան լայն գաղափարներն են սերմանում։ Միևնոյն ժամանակ ամէն մի ազատասէր էակի սրտում խորին զզւանք ու ատելութիւն է զարթնում դէպի այն պետութիւնները, որոնք ամէն բարբարոս, հակամարդկային միջոցներով կաշկանդում են հպատակ ժողովուրդների բնական զարգացումը։ Նրանք յայտարարում են. „թալանը — նպատակ և սպանութիւնը — միջոց“։ Կեղեքել, անվերջ հարստահարել և կոյր անմտութեամբ երբեք չհոգալ հարստահարող ժողովրդի բարեկեցութեան մասին, մի բան, որ հէնց իրենց պետական շահն է պահանջում։ Այդպիսի մի ռէժիմ ներկայացնում է Թիւրքիան՝ Արևելքում և Սպանիան՝ Արևմուտքում։ Չէնք ուզում ասել, որ Սպանիան Թիւրքիա է, սակայն երկուսի պատմական ճակատագիրների մէջ բաւական նմանութիւն կայ։ Սպանիան ևս երբեմն ահագին թագաւորութիւն էր և պատկառելի գաղութային ուժ, որ հզօրապէս մրցում էր նոյն իսկ Մեծ Բրիտանիայի հետ։ Հարուստ ու ծաղկած գաղութները Սպանիական աւերիչ քաղաքականութեան շնորհիւ մէկ-մէկ ապստամբեցին և բաժանելով գոռոզ Մետրոպոլից (Մայր-երկիր)՝ մի-մի անկախ պետութիւններ կազմեցին։ Այսօր նոյն ռէժիմի տակ հեծում են դեռ Փիլիպպեան կղզիները և Կուբան՝ ամենամեծը Անտիլեան կղզիներից։ Ինչպէս Թիւրքիան կաշուից դուրս է գալիս Հայաստանը ձեռքից չը տալու համար, այնպէս էլ Սպանիան գերմարդկային ճիգեր է թափում Կուբան իր տիրապետութեան տակ պահելու համար։ Բայց բռնակալութիւնը ամէն տեղ խելացնոր է իր անզուսպ մոլեգնութեան մէջ։ Փոխանակ Բրիտանական ռէժիմին հետևելու և ինքնավարութեան ու ազատութեան ճանապարհով մարսելու իր հպատակ գաղութները, նա շարունակ ճնշում, թալանում, գրգռում էր։ Հետևանքը — պարբերական ապստամբութիւններ ու արիւնահեղ կռիւներ...

Եւ կռւում էր Կուբան տասնեակ տարիների ընթացքում։ Գերութեան անարգ շղթաների տակ՝ զէնքի շառաչիւնն էր լսեցնել տալիս անսիրտ Մետրոպոլին...

Դժբաղդաբար ամէն մի նոր ապստամբութիւն աւելի անգութ ու անողորմ էր դարձնում այդ գերութեան լուծը, որը կաշկանդում էր կուբացիների ազատ զարգացումը։ Երկիրը աւեր ու կործանի էր մատնւում, բռնակալութիւնը հրէշային զոհեր էր կլանում և աւելի ևս անողոք վերսկսում էր թալանի ու սարսափի քաղաքականութիւնը։ Այո, բայց և ամէն մի նոր ապստամբութիւն ընդդէմ տիրող ռէժիմի մի քայլ առաջ էր մղում կուբացիներին դէպի բաղձալի նպատակը՝ այդ ռէժիմի տապալումը։ Քա՜նի քանի անգամ գլուխ էր բարձրացրել այդ կղզին իրենից անհամեմատ աւելի ուժեղ Մետրոպոլի դէմ։ Առաջին մեծ ապստամբութիւնը պայթեց Կուբայում 1848 թուականին, (Կուբան պատկանում է Սպանիային դեռ 1492 թուից սկսած, այն ժամանակից, երբ Կոլումբոսը գտաւ Ամերիկան), երբ այնտեղ տիրում էր գերութիւնը բառիս բուն, տնտեսագիտական նշանակութեամբ։ Սարսափելի եղան հետևանքները. տասնեակ հազարաւոր ապստամբ կուբացիներ զոհ գնացին դահճի ճիրաններին...

Այնուհետև Սպանական կառավարութիւնը իր ամենամեծ հոգսերից մէկը դարձրեց Կուբան և նրա ներքին վարչական կազմակերպութիւնը։ Կուբայի կառավարիչներին ընտրում էին ամենագժնդակ բռնակալներից և հրահանգ էր տրւում նրանց՝ ամենախիստ, դրակոնական միջոցներով խեղդել կղզու մէջ ապստամբական ոգին, խլացնել բողոքի ձայնը։

Հալածանքները կրկնապատկւում էին, կղզին տնտեսապէս ոչ թէ չէր առաջադիմում, այլ միշտ յետ էր գնում. նրա տնտեսութիւնը օր օրի վրայ քայքայւում էր։ Չկար գնելու, վաճառելու ազատութիւն, առևտուրը թունաւորուած էր, առևտրական հաղորդակցութիւնները ուրիշ երկրների, և մանաւանդ Միացեալ Նահանգների հետ կրիայի քայլերով էին ընթանում. Մետրոպոլը հրէշաւոր մաքսեր էր սահմանել։ Գիւղատնտեսութիւնը թուլացած էր, սպառուած տասանորդի և անթիւ կամայականութիւնների շնորհիւ։ Դատաստանական ատեանները, որ Սպանիան հաստատել էր Կուբայում՝ միմիայն տեղացիներին կողոպտելու համար գոյութիւն ունէին։ Սպանական պաշտօնեաների զեղծումներին ու ոտնձգութիւններին սահման չկար։ Ով ուզում էր հարստանալ, դէպի Կուբա էր վազում։ Սպանիան լաւ իւրացրել էր կարդինալ Ռիշելիօի և բոլոր բռնաւորների նշանաւոր մաքսիմը. „եթէ ուզում էք ժողովուրդներին հնազանդութեան մէջ պահել, աղքատացրէք նրանց, զրկեցէք տնտեսապէս“։ Կեղեքումների ու յափշտակութեան անսպառ աղբիւր էր դարձել Կուբան Սպանիայի համար, և թշուառ ժողովուրդը սրտի խորքերից անէծք էր մրմնջում սպանացիներին, բաղձալով անցնել մի օր Ամերիկայի գիրկը։

Ներքին յեղափոխական ուժը աճում էր այդ հարստահարութիւնների հետ միաժամանակ. յեղափոխական խմբերը մահւան վրէժխնդրութեամբ համակուած՝ լոյն, ահաւոր դաւադրութիւններ էին կազմակերպում։ Նրանք շատ աղերսեցին, շատ անգամ խնդրեցին Մետրոպոլից խաղաղ ճանապարհով գոհացում տալ իրենց մարդկային պահանջներին։ Նրանց ուզածն էր՝ գերութիւնը ջնջել, սահմանադրական կարգեր հաստատել, մամուլի, ժողովների ազատութիւն տալ, իրաւունք աղերսագրներ ներկայացնելու, իրաւունք մասնակցելու Մետրոպոլի պատգամաւորական ժողովին։ Սպանիան խուլ մնաց այդ պահանջների դիմաց, և ահա ծայրայեղ զայրագնութեան հասած՝ Կուբան նորից վառեց ապստամբական կրակով. սկսւեց երկրորդ նշանաւոր ազատական կռիւը 1868 թուին, որը տևեց մի քանի տարի, ամառ ու ձմեռ շարունակ։ Բայց և այս անգամ էլ վիժեց։ Ահռելի կորուստներ եղան երկուստեք, ապստամբների դէմ սոսկալի հալածանքներ սկսւեցին. ահագին խմբերով հրացանի էին բռնում նրանց...

Կուբան մնաց դարձեալ Սպանիային և երկար ժամանակով հրատարակեց պաշարման վիճակի մէջ։

Անցան տարիներ։ Շատ քամիներ փչեցին Մետրոպո-

լի վրայից, Կուբայի ըէֆորմների համար շատ ծրագիրներ կազմեցին։ Գերութիւնը ջնջեց. ջնջեց սկզբունքով (այդ էլ մի բան էր), բայց իրաք շարունակեց գոյութիւն ունենալ. լուծը լուծ մնաց։

Կուբայի յեղափոխութեան վերջին ուժեղ թափը եղաւ երեք տարի առաջ սկսւած ապստամբութիւնը, որը այսօր ևս տակաւին շարունակւում է, թէպէտ և Սպանիան զինադադար հռչակեց։ Ասում ենք վերջին... անտարակոյս. այդպէս է թելադրում մեզ կուբական հարցի ներկայ սուր վիճակը։

Երեք տարի անընդհատ կռիւ, դիւցազնական կռիւ։ Յեղափոխութիւնը Կուբայում անպատմելի զոհաբերութիւններ արեց, ծանր, անփոխարինելի կորուստներ ունեցաւ, բայց և կանգուն մնաց։ Գաղտնի դաւադրութիւններ, թոյն ու կրակ, սուր, ատրճանակ, դինամիտ, — ամէն բան ասպարէզ հանեցին։ Թող եւրոպական պօռնիկ մամուլը յանդգնէր խրատ ու յորդոր կարդալ կուբացի „ա ն ի շ խ ա ն ա կ ա ն ն ե ր ի ն“...

Նրանք արեցին այն, ինչ որ պէտք էր անել։ Նրանց պէտք էր թէ խմբական և թէ ընդհանուր ժողովրդական կռիւներով ու դաւադրութիւններով մշտնջենաւոր սարսափի մէջ պահել տիրող ռէժիմը, մինչև որ այդ ատելի ռէժիմը վերանար թանկագին հայրենիքից։ Նրանք այդ հայրենիքի սրբազան դատին զոհաբերեցին իրենց ամենազնիւ զաւակներին, անվեհեր Մացէօներին, որոնք համաշխարհային հռչակ ստացան։

Հնձեցին յեղափոխական ուժերը, այո. հայրենիքը աւերեց, առևտուր, արդիւնագործութիւն կանգ առան, սև թշւառութիւնը իր թևերը տարածեց բովանդակ երկրի վրայ. այսօր հազարաւոր որբացած մանուկներ և ամուսնազուրկ կանայք մերկ ու բոբիկ թափառում են Կուբայում և ողորմութիւն են աղերսում... Սրտաճմլիկ, աղեկտուր տեսարան, որ անխուսափելի հետևանք է բոլոր ազատական կռիւների։ Այդ բոլորը կայ։ Բայց ի՞նչ ողորմելի պատկեր է ներկայացնում ինքը Սպանիան՝ Կուբայի դահիճը։ Բաւական է յիշել միայն, որ Կուբան Սպանիային նստեց — միմիայն վերջին երեք տարում — մօտ հ ա ր ի ւ ր հ ա զ ա ր մարդկային կեանք. դեռ չհաշւած դրամական հրէշաւոր կորուստները, որոնք այնքան զգալի էին Սպանական խղճուկ ֆինանսների համար։

* * *

Անվերջ կռիւները, կղզու մշտնջենական հրաբխային դրութիւնը չէր կարող անտարբեր պահել հիւսիսային Ամերիկայի մեծ հանրապետութեանը, որը Կուբայի հետ կարևոր առևտրական յարաբերութիւններ ունէր, և մինչև օրս մեծապէս նպաստում էր կուբացիների յեղափոխական գործին։ Նա վճռեց դուրս գալ իր երկարատև սպասողական դիրքից և զէնքի ուժով վերջ դնել Կուբայում Սպանական վայրագութիւններին։ Ընդհարումը Ամերիկայի ու Սպանիայի միջև բաւական ժամանակից ի վեր անխուսափելի էր դիտւում, և այսօր արդէն պատերազմը յայտարարւած է... Շատ արիւն կը հոսէ, անտարակոյս. սակայն „արիւնը արիւնով մաքրել“ մեր աշխարհի նշանաբաններից մէկն է տակաւին...

Ոմանք ծափահարում, ոմանք դատապարտում են Ամերիկայի միջամտութիւնը։ Ի՞նչ ասել կուզէ, որ վերջինս ղեկավարւում է իր սեփական շահի նկատումներով, ինչպէս որ ամէն մի բուրժուական պետութիւն նման պարագաներում։ Հիւսիսային Ամերիկան այսօր տնտեսապէս ամենաառաջաւոր երկրներից մէկն է համարւում քաղաքակրթւած աշխարհի մէջ։ Կապիտալիստական խոշոր արդիւնագործութիւնը այնտեղ վիթխարի թռիչք է ստացել վերջին տասնամեակների մէջ և առասպելական հարստութիւններ է դիզում։ Լայն արդիւնագործութեան համար պէտք են նաև լայն արտահանման շուկաներ. ուստի Միացեալ Նահանգների հանրապետութիւնը վաղուց ի վեր աչք էր տնկել ընդարձակ ու հարուստ Կուբայի վրայ։ Այսօր մի որոշ տրամադրութիւն Միացեալ Նահանգներում ձգտում է Կուբան Սպանիայից խլելով՝ իրեն սեփականացնել. բայց կայ և հակառակ տրամադրութիւնը, որը համաձայն կուբացիների ցանկութեան, յայտարարում է. „Կուբան կուբացիներին“։ Թէ որը այդ տրամադրութիւններից կը գերակշռէ, — ապագան ցոյց կը տայ. յամենայն դէպս Սպանական տիրապետութեան օրհասական ժամը հնչած է Կուբայում։

Այդ է հետևանքը ամէն մի քաղաքականութեան, որը հաստատւած է սարսափի, սպանութիւնների և բացարձակ յափշտակութեան վրայ...

---

## ԿԱՊՈՅՏ ԳԻՐՔԸ

### 1896 Դեկ. 7 — 1897 Սեպ. 16

—o—

„Հայաստանի անցքերին վկայ“ Կապոյտ գիրքը Եւրոպայի համար առ այժմ էն պաշտօնական աղբիւրն է — միւս տէրութիւնները ձագ դրած ըլլալով իրենց պաշտօնագրերը — որ խոշոր և ոստուն գծերով կը պատկերացնէ մօտ ինը ամսւան ժամանակամիջոցի մը մէջ Հայաստանի մէջ անցած դարձածները, զօրեղ մարդասիրական ջանքերը և հակամարդկային արարքները, ինչպէս ջարդ, սպանութիւն, սպառնանք, անվերջ նեղութիւններ, հալածանք և... նպաստի ձեռնարկներ։

Գրեթէ ամբողջ գիրքը վտիտ կապոյտ ծոցին մէջ կը գրկէ արիւնոտ ու արցունքոտ Հայաստանը, որուն վրայէն Ալպիօնի ամբարտաւան զրահաւորներն իսկ, շոգեպինդ պիտի կրնային լողալ։

Սակայն պէտք չէ ըսել թէ կապոյտ գիրքը հաւատարիմ հայելին է եղածներուն. երրորդ, չորրորդ բերնէ քաղւած տեղեկութիւններ կան հոն, շատեր ալ թրքական ծագում ունին, դիւանագիտական նկատումներն ալ շատ բան ծալւած են անշուշտ. մանաւանդ ազատ չէ լեզի կամ ձգտուն խաղերէ, երբ հիւպատոսական տեղեկագրերը, սմսեղուկ և խպնուկ հետևութիւններ կը կը հանեն, հայկական շարժումներու մէջ ռուսական հոտ նշմարելով — ինչպէս Ռուսիա ալ Անգլիոյ ոսկիներուն շխրտուկը կը լսէր Պոլսոյ դեպքերուն ատեն — գայլի հոտուտքներ — և թէ Արաքսի միւս կողմէն դասալիքներ են որոնք կը թռին կուգան Հայաստան ապստամբութիւն ընելու համար, եթէ ճէնթլմէն հիւպատոսները չեն շփոթեր Հայաստանը... Թրանսվալի հետ

Ստորեւ քաղուածաբար եւ անփոփ կը դնենք կապոյտ գրքին այն մասերը որոնք յեղափողական գործունէութեան հետ կապ ունին: Գրքին մէջ լայն տեղ մը կը բռնեն արդէն այդ մասերը:

***

1897 փետր. 3. — Սըր Ֆիլիբ Քըրրի Սալըզպըրիին կը գրէ Պատրիարքին կողմէ արտասահման ղրկուած պատուիրակին յաջողութիւնը, աւելցնելով թէ գործելու թեր եղող միակ ընկերութիւնը Դրօշակն է, միւսները սպասողական դիրք մը բռնած ըլլալով:

97 փետր. 8. — Հազարապետ Ուիլիըմս (Վանի հիւպատոս), կը գրէ Ֆիլիբ Գըրրիին թէ Վանի հայերը կարողացեր են ճնշում բանեցնել յեղափոխականներուն վրայ, իրենց դաժան գաղափարներէն ետ կենալու համար եւ խնդրեր են մինչեւ գարուն ո եւ է շարժում չընել:

97 մարտ 14. — Հազարապետ Ուիլիըմս Սըր Ֆիլիբ Գըրրիին կը տեղեկագրէ Վանի անցքերու մասին, կը քննադատէ Թէպրիզի Հիւպատոսին Վանի տեղեկագիրը իբր թիւր:

Ուիլիըմս կիմացնէ դեսպանին յեղափոխականներուն Վան մտնելը. յետոյ կաւելցնէ. "Մըստր Վուտ Հնչակեաններու ու Արմենականներու մասին կը խօսի իսկ զանց կընէ Դաշնակցականները՝ Վանի երեք ընկերութիւններուն էն բազմաթիւը եւ էն լաւ զինուածը"

„Յեղափոխականները Վանէն հեռանալէն առաջ քիւրդերը Վարագայ Վանքը թալանեցին, մասամբ ալ այրեցին: Արժէքաւոր գրքերը ազատուեցան":

„Այժմ շատ լաւ ծանօթ է թէ, յեղափոխականները ապստամբութիւն կը սարքէին Վանի մէջ բայց պատրաստ չէին. կարծեմ ոտնկանդնումը Օսմ. Պանքի յարձակման հետ պիտի զուգադիպէր:"

Յեղափոխականները ըմբոստ գտնելով իրենց եղած յորդորներուն, թիւրքերը կը գրաւեն անոնց կայաններէն մէկը, բայց, ըստ Ուիլիըմսի, բանակին չկրնալով դիմադրել խոյս կուտան եւ կարգապահութեան պակասութիւնով եւ անհամաձայնութիւնով, գրեթէ բոլորովին կը ջնջուին:

97 ապրի 5. — Հազարապետ Ուլեըմս կը հեռագրէ Գըրրիին հայերուն նոր գործունէութեան սկսումը: Թիֆլիզէն հայերէն նամակներուն ըստծին, իբր թէ քանի մը պետերու լուր գացած է մինչեւ մայիս հանդարտ մնալ. եւ եթէ մինչեւ այն ատեն կացութեան փոփոխութիւն մը չըլլայ, զէնք, դրամ եւ մարդ պիտի ստանան յեղափոխականները:

Վանի ժողովուրդը, կը յարէ Ուիլիըմս, վերջին ծայր անձկութեան մէջ է, վալին քիչ մը հանդարտեցուց զիրենք եւ ապահովեց: Երեք քիւրդ փաշաներու աքսորի որոշումը նպաստեց հանդարտութեան:

Կանոնաւոր հեծելագունդ մը պիտի կարգուի պարսկասահմանագլխին վրայ:

97 յուլիս 2. — Փ. Գըրրի Սալըզպըրիին կը հաղորդէ հարիւրապետ Էլիըդի (հիւպատոս Վանի) հեռագիրը, որուն մէջ Էլիըդ պարսկական սահմանագլուխը այցելութեան միջոցին հայ յեղափոխականներու հետ տեսակցութիւն մը կունենայ. որոնք կուրանան թէ ո եւ է դիտում չունին, թէեւ ուրիշ աղբիւրէ կիմանայ Էլիըդ թէ յունիսի սկիզբները քիւրդերուն վրայ յարձակելու մտադիր են:

Տաճիկ կառավարութիւնը պարսիկ կառավարութենէն բացատրութիւն կը խնդրէ, իսկ այս վերջինը կը յայտնէ թէ հայերը ո եւ է գործունէութիւն չեն ցուցներ ոչ ալ բան մը ընելու երեւոյթը ունին:

97 յուլիս 6. — Վանի հիւպատոսը կը տեղեկագրէ Գըրրիին Շէյխ Սատըգին գործած չարիքները եւ ցեղապետ Մուսա պէյի մատուցած ծառայութիւնները:

Հիւպատոսը Հէքեարիի ապահովութեան համար, Սատըգին աքսորումը կարեւոր կը նկատէ. իսկ թիւրք կառավարութիւնը եւ Շէմսի փաշան ձեռք չեն ուզեր վերցընել անոր վրայ: Շէյխը Պարսկաստան կը փախչի: „Անշուշտ եթէ կառավարութիւնը ականջանցուկ չընէր, կըսէ հիւպատոսը, Շէյխը հեշտութեամբ կը կալանէին:"

Եւ կաւելցնէ. „Շէյխին աքսորումը, խռովարար քիւրդերուն պիտի հասկցնէր թէ կառավարութիւնը իրենց էն մեծէն անգամ չէր վախնար:"

Հիւպատոսը Մուսա պէյի մասին գովասանքով կը խօսի. որ Շէյխին հետ արիւնարբու թշնամի է:

97 յուլիս 13. — Վանի հիւպատոսը կը տեղեկագրէ թէ թիւրքերը զէնք կը բաշխեն, հայերուն սահմանը անցնելու լուրը պատրուակ բռնելով. եւ թէ Վանի մէջ, Թէսալիոյ խնդրին համար թիւրքերու փորցաւը այնքան սաստիկ է, որոնք առիթի մը կըսպասեն քրիստոնեաներուն ընդհանուր ջարդ մը առաջ բերելու համար:

Էլիըդ ուրիշ աղբիւրէ կիմանայ թէ յեղափոխականները մտադիր են մաս մաս գողտուկ քաղաք մտնել եւ սպասել ընդհանուր պայթումի մը:

Յետոյ հիւպատոսը կը խնդրէ դեսպանէն որ պարսիկ կառավարութեան վրայ ճնշում դրուի սահմանագլուխը հսկելու եւ կարգը պահելու համար:

97 օգոս. 5 — Սալըզպըրին Պարսկաստանի Անգլ. դերհիւպատոսին կը հեռագրէ Սալմաստի հայ յեղափոխականներուն Վանի վրայ յարձակելու մտադրութիւնը, եւ կը հրամայէ ստիպել պարսիկ կառավարութիւնը որ թող չտայ հայ յեղափոխականներուն սահմանագլուխը անցնիլ:

97 օգոս. 8 — Սըր Ֆիլիբ Գըրրի Սալըզպըրիի կը հաղորդէ Վան իհիւպատոսին հեռագիրը թէ 1,500 հայեր օգոս. 6 արարշալուսին սահմանագլխին Շիկակ քիւրդերուն գեղին վրայ յարձակած են: Բնակիչներէն 40-50 հոգի սպաննուած կը կարծուի:

97 օգոս. 10. — Ս. Փ. Գըրրի կը հեռագրէ Սալըզպըրիին արշաւանքին լուրը: „Յեղափոխականները երկու ճիւղի բաժնուած, իւրաքանչիւրը 2,000 հոգի, Պաշքալէի եւ Բերկրիի մօտ սահմանագլուխը անցան: Երրորդ հատուած մը Սէրայը պիտի անցնէր: Արդիւնքը դեռ յայտնի չէ: Ուրբաթ լուսդէմ, յեղափոխականները յանկարծ Պաշքալէի մօտ, Շէրէֆ պէյի վրանատին վրայ յարձակեցան սպաննելով, ու բարբարոս կերպով կոտորելով մարդիկ, կիներ եւ տղաքներ:

Յեղափոխականները շաբաթ իրիկուն Պարսկաստան քաշուած են:

Թիւրքերու կողմէն կորուստը կը հաշուի 171 սպաննուած 78 ալ վիրաւորուած. մեծ մասով կին ու տղաքներ. մինչդեռ յեղափոխականներէն 60 հոգի սպաննուած էին, որոնց մէջ գտնուած է ռուս սպայ մը եւ

պարսիկ տարազով քանի մը մահմետականներ։

Յետոյ կաւելցնէ պարսիկ սահմանապահ զօրքերու հրամանատարը, գիտակ ըլլալով այդ շարժման նորէն չլսուած ըրաւ թիւրք իշխանութիւններուն հայերը սահմանը չանցնելու համար ըրած խնդիրքին։

97 օգոս. 13. — Պարսկաստանի Անգլ. դեր հիւպատոսը Սալըզպրիին կը հեռագրէ թէ պարսիկ կառավարութիւնը պիտի արտաքսէ ասպատակող յեղափոխականները։

96 օգոս. 17. — Վանի հիւպատոսը կը հեռագրէ Ս. Փ. Գըրրիին իբր թէ Վասպուրականի մէջ չորս խումբ յեղափոխականներ կան, երևակայական քանակութիւններ տալով անոնց։

97 օգոս. 19. — Պարսկաստանի Անգ. դեր-հիւպատոսը կը տեղեկագրէ Սալըզպրիին թէ յեղափոխական հայերը ցիրուցան ըրւեցան. շատեր ձերբակալւեցան ինչպէս նաև գանձապահը։ Կաւելցնէ թէ քիւրդերը Պոլսէն պզտիկ լուրի մը կըսպասեն Պարսկաստան գրոհելու համար։ Նոյն հիւպատոսը քիչ յետոյ կը հեռագրէ թէ գանձապահը փախած է։

Այս դէպքերուն վրայ Բ. Դուռը արտասահմանի օսմ. ներկայացուցիչներուն կը խրկէ սա շրջաբերականը. „Քանի մը հայ խռովարարներ սահմանը անցնելով Մէզրէկի ցեղին վրայ յարձակեր և 200 հոգի սպաններ են, որոնց մէջ կային կիներ տղաքներ։ Ամենաանգութ կերպով սպաններ են ցեղապետին կինը, զոհերուն շատերուն քիթը, ականջները կտրտեր են։

Կառավարութիւնը հարկաւոր միջոցներ ձեռք առած է. ոճրագործներուն ձերբակալումը պահանջւեցաւ։

Վերևի ըսւածները ամենուն ալ իմացուցէք, և այս մասին լրագիրներուն մէջ սխալ հրատարակութիւնները հերքեցէք։"

* * *

Պարսկաստանի ընդհանուր հիւպատոսը, Վուտ, կը նկարագրէ արշաւանքին սկզբնաւորութիւնը. Շէրէֆի վրանուտին վրայ յարձակումը, և երկու սեռէն 400 հոգի սպանւիլը. կը պատմէ համառօտ մը անոնց վըրաններուն աւարի տալը, և քիւրդերուն 150 հոգիով հայերուն վրայ գալը, ուր հայերը շնորհիւ իրենց վըճռականութեան և զէնքերու գերազանցութեան կը յաղթահարեն։ Քիւրդերը մինչև մթնշաղ կոււելէ յետոյ, կը քաշւին 70 մեռած թողլով մինչդեռ յեղափոխականները 16 մեռած և 16 ալ վիրաւոր կունենան լոկ։ Յեղափոխականները կը քաշւին Պարսկաստան և հայ գիւղերը կը ցրւին...

Նկատողութեան արժանի է որ, կը յարէ Վուտ, խըմբին մարդիկը պատւաւոր ընտանիքի պատկանող տղամարդիկ են. մեծ մասը ռուսահայեր. ոմանք ռուս բանակէն արձակուրդով եկած, և ոմանք ալ դասալիք եղած. բայց ամէնքն ալ զինւած են ռուսական վերջին ձևի հրացաններով և կերևի դժւարութիւն չեն կրեր Արաքսի միւս կողմէն զէնք կամ ռազմանիւթ ստանալու։

Թէպրիզի Անգ. ընդհանուր հիւպատոսը կը գրէ Կիւլէքի դեր-հիւպատոսին թէ ձերբակալւած 20 հայերուն եօթը միայն ասպատակախումբին կը պատկանին որոնց մէջ կային հինգ ռուսահպատակներ, 13 թրքահպատակ և երկու պարսկահպատակ։

14,000 ռուս զինւորական փամփուշտ գտներ հայու խանութէ մը և գրաւուեր է։ Յետոյ զգայնիկ հիւպատոսը կաւելցնէ թէ հայերը Շէրէֆ պէյի վրայ արշաւելէ առաջ, պզտիկ ասպատակութիւններ ըրած և մեծ անգթութիւնով վարւած են, թէ հայերը ամէն արշաւանքէ վերադարձին Պարսկաստան կը փոխադրեն եղեր աւարէ և առևանգւած կիներէ զատ, կնկան ըստինքներով և մարդու ականջներով ու քիթերով լեք տօպրակներ։

Աւելորդ է ըսել թէ անգլիացի հիւպատոսներու և բերնէբերան ժողվտած բրդուճ լուրերը, ժամանակին եւրօպական թղթակիցները աւելի խղճամիտ և մանրամասն կերպով հաղորդած են, հիացումով խօսելով հայ մարտիկներու, կանանց ու երախաներու մասին ցոյց տըւած ասպետական ոգուն համար, Դրօշակը թարգմանաբար հրատարակեց արդէն այդ հաւաստի թղթակցութիւններէն մէկ քանին։

Բայց երբ Բրիտական առիւծը չոյել ուզէ սուլթանը, պոչին փնջուկովը կը գգւէ անոր լուսերեսը։

## ԿՐԷՏԷՆ

—

Դեռ ևս ոչ մի քայլ դէպի հռչակւած ինքնավարութեան հաստատումը։ Խեղճ Կրէտէ — նա դեռ յոյսերով է կերակրւում... Գերմանիան և Աւստրիան յետ կանչեցին իրենց զրահաւորները. Կօնցէրտը սաստկապէս կաղում է, թէպէտ և Հանօտօն յայտարարեց պատգամաւորական ժողովում, որ երկու պետութիւնների յետ քաշւիլը չի յապաղեցնի կրէտական խնդրի լուծումը։ Պարապ բան է հաւատ ընծայել դիպլոմատների ծանուցումներին։

Կրէտէի համար միակ մխիթարութիւնը այն է, որ Ռուսաստանը անդրդւելի կերպով առաջ է մղում իր նախկին առաջարկը՝ կղզու կառավարչապետ նշանակել յունաց արքայորդուն։ Երլըըզում ըստ առաջնոյն յամառում են։ Ընդդիմանալով Նիկօլա կայսրի ցանկութեան, սուլթանը նորից և նորից ծանուցանում է, որ Կրէտէի կառավարիչը պիտի լինի օսմանեան հպատակ և առաջադրում է Կարաթէօդօրի փաշայի թեկնածութիւնը։ Հետաքրքիր է, թէ երբ Ռուսիան կը թողնէ իր համոզող ու յորդորող ընթացքը և աւելի ուժեղ միջոցներով կը ներգործէ Աբդիւլ Համիդի վրայ։ Այն ժամանակ միայն տեղի կը տայ Համիդը և այն ժամանակ միայն կը գայ կրէտացիների համար բաղձալի օրը։ Իսկ մինչ այն՝ կատակերգութիւնը կը շարունակւի յուսահատական միօրինակութեամբ, և ամէն բան կը պտտի կախարդական շրջանի մէջ, որից ելք չկայ։ Աբդիւլ Համիդին անտարակոյս թև է տալիս, ըստ նախկին սովորութեան՝ իր մեծ ու հաւատարիմ բարեկամ Վիլհէլմը. գերմանական ազդեցութիւնը ըստ երևոյթին օր օրի վրայ աճում է Երլըըզում։

Հեռագիրը նորերս ծանուցեց Պետերբուրգից, որ ցարը իր հաւանութիւնն է տւել Կրէտի կազմակերպութեան ծրագրին, որը խմբագրել է մինիստր Մուրավիօվ համաձայնութեամբ Անգլիայի և Ֆրանսիայի։ Ահաւասիկ այդ ծրագրի համառօտութիւնը։

Կրէտէի ժանդարմերիան բաղկանալու է բացառապէս կրէտացիներից՝ քրիստոնեայ և մուսուլման։ Բոլոր բարձր և ստորին պաշտօնեաները նոյնպէս ընտրուելու են տեղական ազգաբնակութիւնից։ Միմիայն ընդհանուր կառավարչապետը բացառութիւն կը կազմէ այդ կանոնից. նա կը հրաւիրէ որոշ ժամանակամիջոցով զանազան երկրներից մասնագէտ անձեր, որոնք կը կազմակերպեն կղզու բազմատեսակ պաշտօնավարութիւնները։

Կրէտական դրօշի ձևն ու գոյնը որոշելու է ազգային ժողովը։

Կառավարչապետը կը վարէ կղզու գործերը օգնութեամբ մի կոմիտէի, որը կրէտական ազգային ժողովը կընտրէ մեծամասնութեամբ. այդ կոմիտէն իր նիստերը կունենայ միշտ կառավարչապետի նախագահութեամբ։

Կը տահմանուի մի առանձին բաժին ծովային զօրութեան համար, որը կը կազմակերպէ եզերային ոստիկանութիւնը, կըզբաղուի եզերանաւարկութեան պաշտօնով, կը հաւաքէ ծովային տուրքը և կունենայ իր հրամատարութեան տակ մի փոքրիկ նաւատորմ բաղկացած երեք կամ վեց նաւերից, որի պաշտօնը կը լինի գլխաւորապէս հալածել մաքսանենգութիւնը։

Կղզու կառավարչապետը կունենայ „թագաւորող իշխանի“ տիտղոսը։ Յաջորդութեան ոչ մի իրաւունք չի կապուիլ նրա անձի կամ տիտղոսի հետ։

Սուլթանի վերհապետութիւնը կղզու նկատմամբ լինելով միայն անուանական՝ թիւրք կառավարութիւնը ոչ մի իրաւունք չունի միջամուխ լինելու Կրէտէի ներքին գործերի մէջ։ Ընդհանուր կառավարչապետը իր վերհապետի սոսկ հաւանութիւնը կը հարցնէ միմիայն արտաքին խնդիրներում, ինչպէս օրինակ առևտրի կամ նաւարկութեան դաշնագիրներ կազմելու միջոցին։

Կրէտէն կը վճարէ սուլթանին տարեկան մի հարկ, որի մեծութիւնը կ՚որոշուի միանգամ ընդմիշտ մեծ պետութիւններից։

Աթէնքի թերթերը, որոնք հաղորդում են ներկայ տեղեկութիւնները, վկայում են նաև, որ իբր ցարը որոշել է երևմտական կողմից ևս թեթևացնել Գէորգ իշխանի գործը։ Կղզու ֆինանսները լինելով խղճալի վիճակի մէջ՝ ռուս կառավարութիւնը կ՚առաջարկէ երկու ուրիշ հովանաւոր պետութիւններին, Ֆրանսիային և Անգլիային երաշխաւորել Կրէտէի համար մի փոխառութիւն 30 միլիոնի չափ։

Նոյն թերթերը աւելացնում են հետևեալ ժանրամասնութիւնները ևս. երեք հովանաւորող տէրութիւնները կը պարգևեն Կրէտէին իւրաքանչիւրը երկու փոքրիկ նաւ և այդ վեց նաւերը կը կազմեն կրէտական նաւատորմը։ Բացի այդ, ցարը վճռել է լայն առատաձեռնութիւններ անել Կրէտէին, հէնց որ Գէորգ իշխանը կը հաստատուի այնտեղ. նա իր սեփական ծախքերով դպրոցներ և հիւանդանոցներ շինել կը տայ կղզու երեք գլխաւոր քաղաքներում՝ Կանէայում, Գանդիայում և Ռէտիմոյում։

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

Ստանդարտի թղթակիցը գրում է Պոլսից.

„Բիթլիսից եկած նամակները վկայում են, որ այնտեղ քաոս, անիշխանութիւն է տիրում։ Անապահովութիւնը կատարեալ է, շնորհիւ՝ ա. ոստիկանութեան. լինելով առանց ռօճիկի ու համազգեստի՝ ոստիկանների մեծ մասը ձգել են իրենց պաշտօնները և նոր պարապմունքներ են սկսել. բ. Միւս կողմից՝ քրդական ցեղերը ներս խուժելով՝ քաղաքի փողոցները դարձրել են պատերազմի դաշտ. Նրանք բռնի ստիպում են հայերին և ուրիշ խաղաղ բնակիչներին փակել խանութները և դադարեցնել ամէն գործունէութիւն։“

## ՆԻԻԲԱՏՈՒԹԻՒՆ

**Հ. Յ. Դ. ԿԵԴՐՕՆԱԿԱՆ ՍՆՏՈՒԿՆ** ստացած է.

Սեւ-Ջուրէն՝ Խաչ. 6 ռուբլի, Զօլաղ 4 ռ., Օճախ 4 ռ., Ասնղ 2 ռ., Երգիչ 2 ռ. ու կէս, Կշիռ 2 ռ. ու կէս, Կանոն 2 ռ.։

Վաղզէն Մասնաճիւղէն՝ Մոկրայ 6 ռուբլի, Մեծքար 6 ռ., Nr 6 1 ռ., Ռէշիշ 9 ռ., Եղիշէ 2 ռ., Ապառաժի որդի 3 ռ., Վիճակախաղից 12 ռ.։

Դաղթ. Մասնաճիւղէն՝ Հովատուն քաղաք Երօր 9 ռ. ու կէս։

**ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ՝**

Թիւրքիոյ Բ. քաղաքէն՝ Կ.-ի ձեռքով 215 ռուբլի (25 լր. օսմ.) հանգանակուած հետեւեալ կերպով.

Իւր կողմէ 354 դահեկան, Շէմն (97 օգ.-էն սկսեալ) վեց ամսական 150 դ., Դժոխք (97 հոկտ. սկսեալ) վեց ամսական 150 դ., Սաղայէլ Ս. Պ. (97 հոկտ.-էն սկսեալ) չորս ամսական 100 դ., Տախտակ 75 դ., Խնձոր-Հայկուհի 20 դ., Շանթ 54 դ., զանազան միջոցներով հանգանակուած 160 դ., Համադանէն պարոն Յակոբանցէն նուէր 20 դ., Ն. աւանէն խլուրդի ձեռքով 3 լր., Խմբակէն 12 լր.։

Բարիզէն „Vers“ 10 ֆրանք. Լօնտոնէն Մ. Դ. Սուզիկեան 3 շիլլին. Ժընեւ Հօգա 1 ֆր., Մ. 3 ֆր., Օր. Ն. 3 ֆր.։

**ՆԻԻԵՕՐՔԻ Կոմիտէն՝**

Բուէնոս-Այրէս ուղարկուած հերոմների օգտին հանգանակուած դրամի հաշիւը։

Նիւ-Եօրք 335 դօլար 40 սենթ, Նէշլա 60 դ. Լին 65 դ. 40 ս., Հէվրհիլ 24 դ., Սէլիմ 76 դ. 35 ս., Լօրէնս 60 դ., Ուստր 47 դ. 25 ս.։ Համագումար 668 դօլար 40 սենթ։

**ՈՍԿԵՀԱՆՔԻ Կոմիտէն՝**

„Հուր-Երկաթ“ քաղաքի քարաժայռէն Բագրատունեաց խ. երեք ամսեայ շաբաթավճարներէն գոյացած 110 դահեկան, նոյնպէս երեք ամսեայ շաբաթավճարներէն գոյացած Ռուբինեաց խ. 72 դ., Շարժուն, Կամեցող, Լուսին, Ծերունի, Կարմրոտ 10-ական դ., Պարտէզ 20 դ.։

Անշուք 15 օսմ. ոսկի, Նարդիմ 20 դահեկան, Ալք եւ Խալիք 40 դ., Կանգուն 5 դ., Արիւն խ. 20 դ., Անուշաւան խ. 21 եւ կէս դ., Անդրանիկ խ. 15 դ., Ռուբինեանց խ. 10 դ., Որոտում խ. 20 դ.։

Շոգի քաղաքէն 80 դ., Ա. քաղաքի Արամայիս խ. 40 դ.։

Ածխահանքէն՝ Թուր վեց ամսավճար 3 օսմ. ոսկի, Ջուր երեք ամսավճար 30 դահեկան, Վրէժ 40 դ., Նիզակ 40 դ., Առիւծ 30 դ., Վահագն 60 դ., Մուշէղ 20 դ., Ժիրայր 20 դ., Երկաթ 20 դ., Սուր երեք ամսավճար 30 դ., Հեզ 10 դ., Արթուն 10 դ., Պարոյր 10 դ., Վարդ 10 դ.։

Սեւ-Բերդ քաղաքէն՝ Հայ արիւն 40 դահեկան Աւել 10 դ., Ազատ 5 դ., Քարքին 5 դ., Գինի 20 դ., Լոյս 10 դ.։

**ՆԱԻԱՀԱՆԳԻՍՑԻ Կոմիտէն՝**

Մ. Ցով.-ի ձեռամբ 60 ռուբլի։

Խմբագրութեանս դիմել հետևեալ հասցէով՝

Rédaction du Droschak, Genève (Suisse)